



Արժ. Տ. Գուրգէն Աւագ Քահանայ Մուրատեանի

Արժ. Տ. Գուրգէն աւագ քահանայ Մուրատեանը ծնուել է 1928 թուականի Մայիսի 1-ին Էջմիածին քաղաքում՝ Հայաստան: Սկզբնական կրթութիւնը ստացել է Էջմիածնի #1-ին միջնակարգ դպրոցում: 1945 թուին ընդունուել է 1951 թուին աւարտել է Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը:

1951 թուի Մայիսի 9-ին Սարկաւագ է ձեռնադրուել երջանկայիշատակ Տ. Ռուբէն Արքեպիսկոպոս Դրամբեանի ձեռամբ: 1951-52 թուականներին Երջանկայիշատակ Տ. Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ 8 Սարկաւագների հետ մեկնել է սովորելու Մոսկուայի Հոգեւոր Ճեմարան: Վերադարձին տարբեր աշխատանքներ է կատարել Էջմիածնում՝ (վերակացու Հոգեւոր ճեմարանում, Մայր Աթոռի ծախսարար եւ այլն):




1957 թուականին ամուսնանում է օրիորդ Վարդուհի Տէրտէրեանի հետ, բախտաւորուելով երեք զաւակներով:

1960 թուականից մինչեւ 1978 թուականը՝ Երջանկայիշատակ Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորով նշանակվում է Արարատեան թեմի թեմական խորհրդի անդամ:

1963 թուականին ընդունում եւ 1969-ին աւարտում է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետը:

1978 թուականի Յուլիսի 31-ին Ս. Գեղարդայ վանքում քահանայ է ձեռնադրում Երջանկայիշատակ Տ. Կոմիտաս Արքեպիսկոպոս Տէր Ստեփանեանի ձեռամբ եւ նշանակում որպէս ծխակատար քահանայ Ս. Գեղարդայ վանքում:



Երջանկայիշատակ Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեհաճ կարգադրութեամբ 1980 թուականի Մարտի , ոին նշանակում է Ս. Խոր-Վիրապ վանքի վանահայր:

Տասներեք երկարաձիգ տարիների ընթացքում Տ. Գուրգէն աւագ քահանայ Մուրատեանը բազմաթիւ հոգեւոր եւ շինարարական աշխատանքներ է կատարել Ս. Խոր-Վիրապ վանքում, արժանանալով հայ հաստացեալ ժողովրդի գնահատանքին:

Երջանկայիշատակ Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ի նկատի ունենալով կատարուած Եկեղեցաւեր եւ հայրենասեր աշխատանքները Տ. Գուրգէն աւագ քահանայ Մուրատեանին շնորհում է հետեւեալ տիտղոսները՝:

- Քահանայական լանջախաչ կրելու իրաւունք 1979թ. Դեկտ. 14-ին կոնդակ #990,
- Ծաղկեայ փիղոն կրելու իրաւունք 1981թ. Ապրիլ 10-ին կոնդակ #1056,
- Աւագութեան աստիճան 1981թ. Դեկտ. 18-ին, կոնդակ #1098:

1994 թուականին սրտի տագնապ ստանալու պատճառով Վեհափառ Հայրապետի թույլտութեամբ Տ. Գուրգէն աւագ քահանայ Մուրատեանը մեկնում է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, որտեղ սրտի բարդ վիրահատութիւն է կատարում՝ փոփոխութեան երթարկելով սրտի 5 (հինգ) արիւնատար անոթները:

Հիւանդութեան պատճառով, իր փափագի համաձայն հանգստեան է կոչվում եւ հաստատում Ամերիկայի Միացեալ 2003 թ. Ամերիկայի Արեւմտեան թեմի Երիտասարդաց Առաքելութեան Կեդրոնի Տնօրէն Արժ. Տ. Վազգէն քինչ. Մովսէսեանի խնդրանքով, թեմի ժրաջան առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանը նշանակում է Տ. Գուրգէն Աւագ Քահանայ Մուրատեանը իբր խոստովանահայր Կեդրոնի Եկեղեցու: